ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. մայիսի 26-ից 29-ը Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն)՝ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Իրինա Ղափլանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն)

   2019թ. մայիսի 26-ից 29-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Եվրոպական հանձնաժողովը Ավստրիայի կառավարության հետ համատեղ

   ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

   Մասնակցություն ԵՄ Արևելյան գործընկերության նախաձեռնության շրջանակներում գործող Բնապահպանության և կլիմայի փոփոխության հարցերով պանելի 7-րդ նիստին:

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Արևելյան գործընկերության «20 արդյունքներ մինչև 2020թ»-ի առաջընթացը, ինչպես նաև Լյուքսեմբուրգում կայացած շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության վերաբերյալ նախարարական հանդիպման արդյունքները, որի վերաբերյալ յուրաքանչյուր երկիր ներկայացրեց զեկույց և անցկացվեց կլոր սեղանի քննարկումներ:

Հանդիպման ընթացքում քննարկված հիմնական ոլորտներն էին ջուրը, հողը, անտառը, ինչպես նաև անդրադարձ եղավ կլիմայի փոփոխությանը և կանաչ էկոնոմիկային: Այն լավ հարթակ էր ևս մեկ անգամ արձանագրելու «ԵՄ+ Ջրային նախաձեռնությունը» հաջող ընթացքը և պատրասկամություն հայտնելու շարունակական համագործակցության համար: Համանախագահի պահանջով երկրները պետք է ներկայացնեն նստաշրջանի ընթացքում արձանագրված զարգացումների վերաբերյալ տեղեկատվություն:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրության կատարելագործման և կիրարկմանն առնչվող հարցեր, որն ուղեկցվեց կլոր սեղանի քննարկումներով և որի ընթացքում յուրաքաչյուրը

ներկայացրեց իր երկրի դիրքորոշումը տվյալ հարցի շուրջ: Իմ կողմից անդրադարձ եղավ՝

- Ներկայիս իրավական ենթակառուցվածքի և նախատեսվող փոփոխությունների նկարագրությանը
- «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից և Եվրոպական Միության և ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի միջև» աշխատանքների շրջանակին, ինչպես նաև կառավարության 18 ոլորտային ծրագրերին
- շրջանաձև տնտեսության շրջանակներում իրականացվող նախաձեռնություններին և գործունեության ներկայացմանը:

Քննարկումների ընթացքում առավել ուշագրավ էր Բնապահպանական իրավունքի կիրառման և իրականացման համար Եվրոպական Միության Ցանցի նախագահ պրոֆեսոր Դիմիտրիս Դերմատասի ելույթը, որտեղ նա ընդգծեց երկրներում խիստ իրավական ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտությունը, ինչը կապահովվի օրենքների արդյունավետ կիրարկումը շրջակա միջավայրի արդյունավետ կառավարման համակարգ ունենալու տեսանկյունից:

Կանաչ տնտեսության վերաբերյալ ելույթների ժամանակ ներկայացվեց Չեթհեմ Հաուզի կողմից հրապարակված «Ներառական շրջանաձև տնտեսություն. Առաջնահերթություններ զարգացող երկրների համար» վերնագրով մի փաստաթուղթ, որը կարևոր է ներկայումս շրջանաձև տնտեսության համար ռազմավարության մշակման համար:

Հանդիպման ընթացքում Ավստրիայի շրջակա միջավայրի գործակալության կողմից ներկայացվեց զեկույց Ավստրիայի օդի արտանետումների գույքագրման վերաբերյալ որն իրականցվում է 1994թ-ից: Ինտեգրված գույքագրումը ներառում է ջերմոցային գազերը և օդի աղտոտիչները: Ջերմոցային գազերի գույքագրումն իրականացվել է 2000թ-ից սկսած: Նրանք իրականացրել են Թվինինգ նախագծեր Բուլղարիայում, Ռումինիայում, Խորվաթիայում, Թուրքիայում, Մակեդոնիայում, Կոսովոյում, Սերբիայում:

Մայիսի 28-ին մասնակցել եմ նաև «ԵՄ-ն կլիմայի համար» ԵՄ կողմից ֆինանսավորվող տարածաշրջանային նոր ծրագրի պաշտոնական մեկնարկին: Ծրագրի նպատակն է օժանդակել ԵՄ արևելյան գործընկերության վեց երկրներին հասցեագրելու կլիմայի փոփոխության մարտահրավերները՝ Փարիզյան համաձայնագրով ստանձնած պարտավորությունների համատեքստում:

Ավստրիայի շրջակա միջավայրի գործակալությունը հաստատվել է որպես «ԵՄ-ն կլիմայի համար» ծրագրի պաշտոնական գործընկերներից մեկը: Սակայն վերջիններիս հետ համագործակցությունը անհրաժեշտ է նաև նախագծից դուրս՝ կիրառելով Տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման գործիք (TAIEX) ու «Թվինինգ» ծրագիրը:

Որպես նախագծի մեկ այլ գործընկեր ներդրվել և հաստատվել է «Կլիմայի նոր ինստիտուտը»: Ներկայումս նրանք աշխատում են Վրաստանի, Մոնղոլիայի,

Քենիայի, Արգենտինայի հետ Ազգային մակարդակով սահմանված ներդրումների վրա:

Հանդիպման ավարտին Նատալյա Օլոֆինսկայան տեղեկացրեց, որ նրանք դեռ ունեն ֆոնդեր Ռուսական հավատարմագրային հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերում, որով կարող են նախարարությունից որևէ մեկին Վրաստան ուղարկել՝ տեսնելու և ուսումնասիրելու, թե ինչպես է նրանց նոր հիդրոօդերևութաբանական համակարգը ստեղծվել:

Հարկ է նշել, որ «ԵՄ-ն կլիմայի համար» ծրագրի նախնական աշխատանքային փաստաթղթի մեջ 2 հարց կա, որն առանձնացրել էինք: Առաջինը սեմինարների և թրեյնինգների ճնշող թիվն է, մյուսը՝ Ազգային մակարդակով սահմանված ներդրումների հետ տարվող զուգահեռները:

Թրեյնինգները և սեմինարները սովորաբար հանդիսանում են ծրագրի բաղադրիչներ և դրանց տեխնիկականն առաջարկների ներքո մենք կարող ենք օգտվել միջազգային փորձագիտական աջակցությունից: Նախագծի այս փուլում և առհասարակ նախագծի հայեցակարգը փոփոխման ենթակա չէ:

Ազգային մակարդակով սահմանված ներդրումների գործընկերության մեջ չկա բավականաչափ աջակցություն ազգային մակարդակով սահմանված ներդրումների զարգացման համար և այս նախագիծը վերջինիս զարգացմանն է ուղղված:

6. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Վերոնշյալ միջոցառման շրջանակներում երկկողմ հանդիպում եմ ունեցել Իտալիայի շրջակա միջավայրի, հողի և ծովի նախարարության միջազգային համագործակցության բաժնի ներկայացուցիչ դոկտոր Սալվատոր Անգելոյի հետ: Քննարկման ժամանակ նշեց, որ Իտալիան հետաքրքրված է Հայաստանի հետ շրջակա միջավայրի ոլորտում համագործակցությամբ և ցանկություն ունի ստորագրել Հուշագիր երկու երկրների միջև:

7. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՄ Արևելյան գործընկերության նախաձեռնության շրջանակներում գործող Բնապահպանության և կլիմայի փոփոխության հարցերով պանելի հերթական նիստի ընթացքում քննարկվեցին հետևյալ կարևոր հարցերը.

1. «20 արդյունքներ մինչև 2020թ.» փաստաթղթի՝ շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության ոլորտում իրականացված աշխատանքների առաջընթացը,
2. 2018թ.-ին Լյուքսեմբուրգում կայացած Արևելյան գործընկերության շրջակա միջավայրի հարցերով 2-րդ նախարարական հանդիպման պայմանավորվածությունների իրականացման ընթացքը,
3. Բնապահպանական օրենսդրության իրականացման և կիրարկման ընթացքը Արևելյան գործընկերության երկրներում,

4. ԵՄ կողմից ֆինանսավորվող «ԵՄ շրջակա միջավայրի համար» /EU4Climate/ և «ԵՄ Կլիմայի համար» /EU4Environment/ տարածաշրջանային ծրագրերի իրականացման զեկույցները:

Գործընկեր երկրների ներկայացուցիչները հնարավորություն ունեցան տրամադրելու տեղեկատվության «2020-ի Ակնկալվող արդյունքներ 20»-ի հետ կապված թիրախներին հասնելու առաջընթացի վերաբերյալ, ինչպես նաև մասնակցեցին վերոնշյալ կարևոր հարցերի քննարկմանը՝ ներկայացնելով երկրի դիրքորոշումը և իրականացնել փորձի փոխանակում:

Հանդիպման ընթացքում ներկայացվեց զեկույց «ԵՄ շրջակա միջավայրի համար» և «ԵՄ Կլիմայի համար» Եվրոմիության նոր տարածաշրջանային ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև Բնապահպանության և կլիմայի փոփոխության պանելի կլոր սեղանի քննարկումներ՝ «Առաջընթաց 2020-ից հետո» խորագրով:

Այցի ընթացքում ստացա երկու համագործակցության առաջարկ: Առաջինը Չեխիայի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության երկկողմ համագործակցության միության պետ պարոն Լուկաս Ջանուարի կողմից էր: Նա նշեց, որ Չեխիայի նախարարությունն իսկապես ցանկանում է վերսկսել երկկողմ համագործակցությունը, քանի որ քաղաքական փոփոխություններից հետո փոխադարձ կապ չի եղել: Հանդիպման ժամանակ նա նաև նշեց, որ հիմնականում հետաքրքրված են հատուկ պահպանվող տարածքներով, քանի որ անցյալում Հայաստանի հետ այս ոլորտում են աշխատել:

Երկրորդ առաջարկը՝ Էստոնիայի շրջակա միջավայրի նախարարության ԵՄ և միջազգային համագործակցության վարչության խորհրդական Հաննա Սոի կողմից էր: Առաջարկը բնապահպանության նախարարության հետ նախարարական մակարդակով համագործակցություն ստեղծելու մասին էր:

Հանդիպման շրջանակներում ուսումնական այց կատարեցինք Վիեննայի օդի որակի մշտադիտարկման 17 կայաններից մեկը: Կայանները փոշու մասնիկները ստուգելու սարքավորումներ ունեն, NO, NOx, NO2, SO2, CO2: Այս առումով մենք պետք է քննարկենք հնարավոր երկկողմանի համագործակցությունը Ավստրիայի Շրջակա միջավայրի գործակալության հետ: Ես խոսել եմ նրանց փորձագետների հետ, և նրանք ասացին, որ օգտագործում են Եվրոպայի համար մաքուր օդի 2008/50/EC դիրեկտիվը, որը հիմք կհանդիսանա մեթոդոլոգիաների և ուղեցույցների հետագա դետալիզացիայի համար:

Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

X _____

Իրինա Ղափլանյան